Ավետիք Իսահակյան

Մեղքի և զղջման երգեր

I

Արևի ոսկին ծով – մազերիդ մեջ,
Գարունը ծաղկած՝ այտերիդ վրա,
Ժպտուն աստղերը՝ աչերումդ անշեջ:
Վարդի ճոխ բուրմունքը շրթունքիդ ցայտուն,
Թավիշ դեղձերը վառ կրծքիդ վրա,
Աշխույժ - թռչնի պես՝ սիրտդ թռվռուն:

Դո՛ւ, անուշաբույր, կախարդիչ մարմին,
Դո՛ւ, պուրպուր գինի՝ շքեղ, դյութական,
Թո՛ղ քեզնով հարբիմ ու գրկիդ մեռնիմ. –
Վայելքը անմահ կմնա միայն …

II

Բարվոք է գուցե, թեկո՛ւզ և իրավ
Ջսպել կրքերը, տիրել կըրքերին.
Սակայն ավելի գեղեցիկ է, լա՛վ, -
Ազա՞տ, սանձարձա՞կ թողնել կըրքերին:

Արա՛, ի՛նչ կուզես, ի՛նչ որ կարող ես,
Պարտքն ու բարին սո՛ւտ են ու պատիր. –
Սիրի՛ր այն, ինչ որ կյանք է տալիս քեզ.
Ինչ որ վիշտ ու մահ – հեռացի՛ր, ատի՛ր:

Կյանքից դուրս չըկա՛ ոչ մի դըրություն.
Ոչի՛նչ էիր դուն, ոչի՛նչ պիտ դառնաս. –
- Կընոջով, երգով, գինով արբի՛ր դուն,
Արբի՛ր, որ մահն ու ու աշխարհը մոռնաս …

III

Ա՜խ, երազ – սիրո հոգիս ծարավուտ՝
Ծըծեցի սակայն շրթունքը մեղքի.
Հոգիս տենչացողգեղեցկին անսուտ,
Բայց թաթախվեցի գարշ ճահճում կյանքի:

Չըգտա մի տեղ անմարմին մի կին,
Սերըս կորցրի պագշոտ գրկի մեջ.
Ինչ որ ունեի - և վսեմ, անգին,
Ողջը աղտոտվեց անհուն կրքի մեջ …

IV

Բարձր լեռների արծիվը մեկ – մեկ
Ագահ ագռավից ցածր կըթռնի,
Սակայն դաշտերի ագռավը երբեք
Հզոր թռիչքին նրա չի հասնի:

Ինչքան թաթախվիմ գարշ ճահճում կյանքի,
Հոգիս չի զարթնի վսեմ երազից.
Չի կորչում մթնում շողն արեգակի,
Բարձունքն ես գիտեմ, կըճախրեմ նորից:

V

Ջինջ ծովակի մեջ կա մի լուռ կղզի,
Մենավոր, անդորր ժայռեղեն մի գահ,
Ուր քաղցր է հնչում դողանջը զանգի,
Եվ փովում մեղսոտ աշխարհի վրա:

Եվ լուռ կղզու մեջ կա նվիրական
Հինավուրց քարայր, մի վեհ սրբավայր.
Այնտեղ պիտ գնամ, լամ, քավեմ, ողբամ
Հոգիս մեղավոր և բազմաչարչար:

Եվ պիտի ծեծեմ կուրծքս քարերին,
Եվ պիտի հեծեմ ցնորքս անբիծ,
Եվ պիտի գտնեմ սերը երկնային,
Որ հոգիս այրե և մաքրե նորից …

1907
Թիֆլիս